

D. O. M.

Mariae Catherinae
 Santini Liburnensi
 Parentibus Carissimis
 Joannes Baptista filgius
 Adunc vivens
 Sibi et Suis
 P. C. An. Rep. Sal.
 MDCCLXX.

Յառաջ բերեալ Տապանագրերէն կ'իմանանք ուրեմն, որ Լիվոնոյի Հայոց եկեղեցւոյն մէջ թաղուողներէն ամենէն վերջինն եղած է Սարգիս Արքեպիսկոպոս Սարաֆեան 1773ին, որմէ վերջ Գոսկանայի Աւագ Գուքս Լէոբովտոս Առաջնոյն հրամանաւ Հայք դադրեցան իրենց ննջեցեալներն եկեղեցւոյն մէջ թաղելէն, եւ գնեցին առանձին գերեզմանատուն, ուր թաղուած են եկեղեցւոյն ժողովրդապետներէն երեքն եւ են Հայր Կարապետ Հալաճեան, Հայր Էմմանուէլ Սերովբեան, եւ Հայր Անտոն Էմբսիզեան, ինչպէս ուրիշ քահանաներ ալ:

Լիվոնոյի Քափուչինաց Ամենատուրբ Երրորդութեան Եկեղեցւոյն մէջ է Հայագգի Կաւիթ Յակոբեանին մահարձանն, որ մասնաւոր բարերար եղած էր յիշեալ կրօնաւորաց, ինչպէս մեր արդէն 1891ին հրատարակեալ Լիվոնոյի Պատմութեան մէջ ընդարձակ աւանգուած է:

Իսկ այն ութ կտոր հայատառ գերեզմանաքարերու օրինակներն՝ որ զանց առնուած են ներկայ հաւաքածոյի մէջ զետեղուելէն՝ են Սարգիս Արքեպիսկոպոսին, Յովհաննէս Քահանային, Ստեփանոս վարդապետին, Իգնատիոս Քահանային, Անտոն Քահանային, Տիրացու Գասպարին, Աղա Տէր Մաթուսին, եւ Ալեքսան Եւդոկիացւոյն, որոնց օրինակներն կը գտնուին Լիվոնոյի Հայոց Պատմութեան ու Տեղագրութեան մէջ:

Քերտ 1. Գնկտեմբեր 1894:

ՄԵՍՐՈՊ. Ա. ՌԻՂՈՍՈՒԵԱՆ:



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԳՐԱՆՍԻՆՈՒՆԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆԱԳԱՂԱԳՔԸ
 Հայաստանի պատմութեանը վերաբերեալ մասնական
 գեղեկութիւններ:

1672. Գրանսիւլուանիա կը գաղթէ ազգայնոց մէկ մասը. եւ ճուրճով կը տեղաւորուի:

1684. Ներս կու գայ մէկալ մասն ու Միքայէլ Աբաֆի Ա. իշխանը զիրենք սիրով կ'ընդունի: Ասոնք գլխաւորաբար Կէօրկէն, Պիսգորից . . . կը տեղաւորուին:

1691. Գեկա. 4. Լէոբովտոս Ա. Կայսրը կու տայ առանձնաշնորհութեանց կոնդակը:

1703. Ռապուզին զօրավարն ու Գրանսիւլուանիոյ կառավարու թիւնը զԱլքսենտիոս Ալբր-զարէսգուլ Ռաքոցիին կը խրկեն, միութիւն ընելու համար: Ռաքոցի զեպիսկոպոսը կը բանտարկէ. բայց 1706ին ազատ կը թողու:

Կերլա քաղաքը մինչեւ 1773 իշխանապետ չտեսաւ: Յովսէփ Բ. եղաւ առաջինն, որ (այս միջոցիս դեռ իբրեւ թագաժառանգ) Յուլիս ամսոյն մէջ Կերլա եկաւ: Միայն երեք ժամ կեցաւ հոս: Թէոդորոս Տանիէլեան արքունի խորհրդականէն հիւրընկալուեցաւ. եւ հոն նախաձաշ ալ կերաւ:

1780. Աւգոստոսի վերջերը, քաղքին կից ու շրջակայ գեղերը Օրմանի, Գէրէօյի, Հէշտագի, Իգլտի մէջ եւ այլն մարտիներու ահագին բաղմութիւն մը կ'իջնայ: Ասոնք երեք ամսուան մէջ ամէն բան փճացուցին լմնուցին: Թէպէտ կառավարութիւնն այս հարուածին առջեւն առնելու համար սաստիկ խիստ հրամաններ տուաւ. բայց ի զուր: Այն ատենի հայ քարտուղարն, որ աղէկ հունգարերէն չէր գիտեր, ըրած կարգադրութիւններուն վրայօք շատ աղաւաղեալ լեզուաւ մը տեղեկութիւններ տուաւ, որոնց մէջ նաեւ յաջորդները կը բովանդակուին: Գերափառ կոյսերական վերին կառավարութեան հրամանին համեմատ, մարտիներուն այն մասն, զոր բռնել կրցանք, բռնեցինք. զոր չկրցանք բռնել՝ պարկերու մէջ դրինք. եւ այլն:¹

1780. Նոյ. 19ին վախճանող Մարիամ Թերեզիա կայսերու հւոյն — քաղքին ամենէն մեծ բարերարին — համար, Հայոց հասարակութիւնը վեց ամիս սուգ բռնեց: Այս միջոցին,

¹ A Felséges esoszári királyi guberniumnak rendetétinél fogvást a suskakát is a szarvaskákat, ugy kiket lehetett összefogdastuk, a kiket nem lehetett zsákbe dugdastuk.